17 նոյեմբերի 2025 թ

ՀՀ ԱԺ պատգամավոր
Հայկ Կոնջորյանին

HETQ.am-ի լրագրող
Արմեն Ղազարյանից
Էլ-փոստ [redacted]
հեռ.՝ 077 [redacted]

Հարգելի պարոն Կոնջորյան,

2024 թվականի հուլիսի 26-ին Դուք և Ձեր կինը՝ Շուշան Ալեքսանյանը ձեռք եք բերել բնակելի տուն Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Բ թաղամասի 7/19 հասցեում:

2025 թվականի մայիսի 29-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում նշել եք, որ բնակելի տունը ձեռք եք բերել 54 մլն դրամով:

«Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի ֆեյսբուքյան էջում նշված է, որ բնակելի տների 1 քմ-ն վաճառվում է սկսած 420 հազար դրամից:

Ձեր կողմից ձեռք բերված բնակելի տների ներքին մակերեսը, համաձայն Կադաստրի կոմիտեից ստացած տվյալների, 246 քմ է, իսկ բնակելի մակերեսը մոտ 180 քմ:

Ստացվում է, որ Ձեր բնակելի տան արժեքը կազմել է 75 մլն 600 հազար դրամ(180 × 420.000), 21 մլն 600 հազար դրամով ավելի քան նշված է Ձեր հայտարարագրում:

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցի վերաբերյալ.

1. Ինչպե՞ս է ստացվել, որ Դուք բնակելի տուն եք ձեռք բերել ընկերության կողմից հայտարարվածից էականորեն էժան գնով:

Խնդրում եմ պատասխանը տրամադրել **էլեկտրոնային** տարբերակով:

Հարգանքով՝ Արմեն Ղազարյան